ՎԱՆՔՈՐԱՅԻ ԵՊՈՎՊԱՅԻՈՅ ՈՐ ԵՆ ՀԱՊԷՇԻ

1°. Վանք Հայր Աբրահամու՝ 'ի գաւթի տաճարին Սուրբ Յարութեան։

2°. Փոքր մատուռն յանուն Մարիամու Եգիպտացւոյ՝ անդ 'ի գաւթին։

3°. Վանք յանուն Ս. Թեկղի՝ 'ի մէջ քաղաքին։

4°. Վանք յանուն Սրբուհւոյն, Աղջկանց վանք եւս ասի, 'ի մէջ քաղաքին։

ՎԱՆՔՈՐԱՅԻ ՅՈՒՆԱՅ

1°. Վանք Ս. Կոստանդիանոսի, որ Պատրիարքի եւս կոչի։

2°. Վանք Ս. Թեոդորոսի՝ 'ի մէջ քաղաքին։

3°. Վանք Ս. Կատարինեայ՝ 'ի մէջ քաղաքին։

4°. Վանք Ս. Գեորգայ՝ 'ի մէջ քաղաքին 'ի թաղն Հայոց։

5°. Վանք Ս. Գեորգայ Նոր՝ արտաքոյ քաղաքին։

6°. Վանք Ս. Գեորգայ՝ արտաքոյ քաղաքին, 'ի կողմն ուաղանաց Սողոմոնի։

Ամենեքեան սոքա 23 Վանքոյք, որ 'ի սոյն Թուականի Յոյնք տիրել կամէին իբրեւ սեփհական կալուած համազգեաց և հետեւակաց իւրեանց, որ և տիրեցին իսկ զկնի ժամանակաց, զոր ունիմք գրել 'ի կարգին։ Իսկ դատաւորն զայս ամենայն առեալ 'ի գրի առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս՝ ըստ հրամանի Արքային։

Իսկ այլազգիք Երուսաղէմի, որք սովոր էին հանապազ դառնացուցանել զքրիստոնեայս. ոմանք 'ի նոցանէ մտեալ 'ի գաւթի եկեղեցւոյն Համբարձման Քրիստոսի 'ի լեառն Զիթենեաց, կամէին չինել տունս բնակութեան. խմացեալ զայն միաբանացն Հայոց՝ ընդդէմ կացին նոցա, զի չէր օրէն յեկեղեցւոջ հաստատել զտուն բնակութեան, ցուցանելով նոցա զվաւերական գրեանս, որք հաստատէին լինիլ տեղւոյն այնորիկ սեփհական աղգին Հայոց. որ եւ նորոգեալ էին հրամանաւ դատաւորին. բայց այլազգիք ոչ ինչ համարէին զբանս նոցա, ուստի հարկ եղեւ Հայոց օրինօք և դատաստանաւ վճարել զիրսն, դնացին առ դա-